

Թիւ 26681
Փետրուար 1, 1980

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Լէշիշեան
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Նկատի առինք Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ժխական
Խորհուրդի 1979 Դեկտեմբեր 27 թուակիր նամակը, զոր
մեզի յանձնեցիք 1980 Յունուար 17ին Մոնթրէալի մէջ:

Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ժխական Խորհուրդին
խնդրանքին կարելի է ընդառաջել հետեւեալ կարգադրու-
թիւնը քննելով:

1. Ըսնի որ Տ. Յուսիկ Ըհնյ. Նշանեան Գանատայի
մէջ կը բնակի, կրնար զայն նշանակել հովիւ Ս. Խաչ
Եկեղեցւոյ համայնքին, կատարելու համար կրօնական
բոլոր պարտականութիւնները ձեր հսկողութեան ներքեւ
եւ ենթակայ Առաջնորդի իշխանութեան:

2. Ժխական Խորհուրդին, ձեր եւ Տ. Յուսիկ Լահա-
նայի համաձայնութեամբ ժխական Խորհուրդը Տ. Յուսիկ
Լահանային կը վճարէ ամսական վեց հարիւր զանատական
տոլար, առաւել ամսական երկու հարիւր տոլար իբրեւ
տան վարձը, որ ենթակայ պիտի ըլլայ փոփոխութեան՝ ըստ
կենցաղային պահանջից:

Յ. Առաջին երկու ամսուան վճարումները կանխաւ Ծր-
խական Խորհուրդը պէտք է փոխանցէ ձեզի եւ դուք Առաջ-
նորդի Փոխանորդի ձեր հանգամանքով դրամատան մէջ հաշիւ
մը կը բանար՝ Տ. Յուսիկ Լահանայի ամսական վճարումնե-
րը կատարելու համար: Ամէն ամսու առաջին շաբաթուան

ընթացքին ծխական Խորհուրդը պարտի նշանակուած գու-
մարները Առաջնորդի Փոխանորդին փոխանցել:

4. Տ. Յուսիկ Բահանային պէտք է տրուի նաեւ տարե-
կան երկու շաբաթ վճարովի արձակուրդ, երկու Կիրակի
բացակայելու իրաւունքով:

Ուրախ պիտի ըլլանք եթէ վերոյիշեալ կարգադրութիւ-
նը կատարէք Ս. Խաչ Սկեղեցւոյ ծխական Խորհուրդին եւ
Տ. Յուսիկ Բհնյ. նշանեանի հետ: Համեցէք մեզի ներ-
կայացնել ձեր վերջնական գրաւոր համաձայնութիւնը՝
որպէս զի պաշտօնապէս զայն հաստատենք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ